



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1651



1148

57



281.6

~~1362.~~ 1912

ԿՈՆԴԱԿ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ

Ե Ի

ԿԱՆՈՆԳԻՐԻՔ ՀԱՐՍԱՆԵԱՑ

ՈՐ

Հաստատեցաւ յօգուտ Ազգիս
տշխատութեամբ Ազգային երկուց խոցովոց
Եկեցեցականաց եւ Աշխարհականաց
եւ.

Հրամանաւ.

Տ. Տ. Մատթեոսի Արքեղիսկոսոսի
Ազգասէր եւ վեհափառ Պատրիարքի
Կոստանդնուղօցոյ
Տղագրեցաւ.

1591



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

= 1848 =

1915

1915

UNIVERSITY OF TORONTO

43

THE UNIVERSITY OF TORONTO

43

THE UNIVERSITY OF TORONTO
LIBRARY

UNIVERSITY OF TORONTO

THE UNIVERSITY OF TORONTO
LIBRARY



UNIVERSITY OF TORONTO

THE UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO



ՅՕՅ
ՊՏՐԻՔ

ԻՏԵՐ Մատթէոս Աբբե-
պիսկոպոսէ, և է
մեծի Աբբայանիսա Մայրաքաղա-
քիս Կստանդնուպօլսոյ :

Յորմէ տիրանուէր ողջունիւ
և օրհնութեամբ յայտարարուի
լիցի համօրէն ազգիս լրութեան,
չնորհափայլ Քարողիչ վարդապե-
տաց, խոհեմազարդ Քահանայից,
ազգախնամ Իշխաննորոց, պեր-

Արհեստաւորաց, և համայն բարեպաշտօն յողովորոցդ արանց և կանանց, որ թագաւորեալ Մայրաքաղաքիս մէջ կը բնակիք:

Աստուծոյ ստեղծուածներուն մէջ, մարդս միայն բանական և մտաւոր կենդանի ըլլալով, իր ամէն գործերը այնպիսի խոհեմութեամբ կարգադրելու է որ՝ իւր վիճակը և կենցաղավարութիւնը ըստ ամենայնի բարեկարգ ըլլայ, և ազբատուէ ու զանազան դիպւածոց վտանգներէն ազատ ըլլայ:

Այնպիսի զգուշութիւններուն մէկն է՝ ժամանակին պարագայները նկատելով՝ ամէն գործերը չամսաւորութեամբ կանոնաւորել, և օտարի մը օրինակին չի հետեւելով, բոլոր կենաց մէջ խաղաղութեամբ ու հանգստութեամբ ապրիլ: Ահա այս մտածելով հիմակուան Ազգային մո-

զովք հասարակաց օգտին համար
պէտք եղած ամուսնական առաջի-
կաց կանոնները սահմանեց, որով
հետեւ մարդկային ընկերութե-
մէջ հարկաւորեալ գործողութեց
մէկն ալ հարսանեաց արարողու-
թիւնն է, որ անով մահկանացու
մարդոց տեսակը՝ որդւոց յորդի
յաջորդելով՝ իւր սերունդին մէջ
կ'անմահանայ, և Քրիստոսի նը-
կեղեցին օրէ օր աճում կը գլու-
նայ և կը շատնայ, և գրեթէ
տունն չի կայ՝ որ հարսնիք չըլլայ.
բայց մեր ազգին նայելով՝ այս
գովելի արարողութիւնը և սուրբ
պատկի խորհուրդը, տգիտաբար
այնպիսի աւելորդ ու անգոսնելի
սովորութիւններով խառնուած
էր որ՝ գրեթէ հարսնիք եղած
տան մը մէջը Նկեղեցւոյ խոր-
հուրդ կատարուելիքը անցայտ ըլ-
լալով, միայն թէ ուտելու խմե-

լու և զուարճանալու տեղ մը կը
 ձեւանար, թող որ այս ուրախու-
 թեան ու սիրոյ հանդէսը, քիչ
 ժամանակէ ետե՛ մանաւանդ թէ
 շատ հեղձոյն հարսանեաց օրերը,
 կուուոյ և ատելուէ, և անաւեր
 խռովութիւներու պատճառ կ'ըլլար:

Քանզի երբեմն կը պատահէր՝
 որ աղջըկան կողմէն խռովութիւն
 գրգռելով՝ ծանր ու սիրտ կու-
 րող խօսքեր կ'ընէին փեսային
 կամ անոր ճնողացը ըսելով թէ՛
 այս ընդակը քիչ ու անվայել է
 մեր աղջըկանը, և երբեմն ալ
 փեսային կողմէն ատելու թի՛ ցոյց
 կուտային հարսին կամ անոր ծը-
 նողացը՝ ըսելով թէ՛ բերած օժի-
 տը (ճէհէզը) քիչ է ու իրեն չի
 վայլեր. հապա ո՛ւր թողունք ըս-
 տակի առ ուտուրով ամուսնացե-
 լոց երկու կողմէն եղած սոսկալի
 կախւները:

Ահա այս կերպ անվայել խր-
 ուովութիւնները երկու կողմէն
 արմատանալով՝ շատ անգամ պա-
 տահած կայ որ՝ նորաստակ առն
 և կնոջ մէջ ալ կը մտնէր զզուելի
 ատելութի մը և իրենց հոգեւոր
 կորստեանը ու մարմնաւոր թըշ-
 ոււառուէն ալ պատճառ կ'ըլլար :

Հասցա՛ այն հարսնիքի տէրե-
 րուն ըրած աւելորդ ծախքերը
 (մասրաֆները) որ կ'ընեն անմը-
 տագրութեամբ՝ թէ ըռզակի և
 թէ ճէկէյի համար, կամ թէ
 չնչին ու անպիտան հանդէսնե-
 րու համար, իրենք զիրենք կա-
 մօք կը ձգեն աղքատութեան ու
 պարտուց խորխորատը և կը տա-
 ռապին չարաչար յուսահատու-
 թեամբ : Վասն զի շատ զաւակի
 տէր եղողը՝ անգամ մը ըրածը չը-
 րածը չի գիտնալով, ու անպի-
 տան կարծիքներով իրեն կարո-

զու թե՛նե՛ն վեր ծախքեր ընելով՝
 հաղիւ թէ մէկ զաւակը կրնայ
 ամուսնացընել, ու միւս զաւակը
 ներք կը թողու անխնամ. որով
 հետեւ կ'ուզէ որ անոնք ալ առ-
 ջինին նման մեծամեծ ծախքերով
 ու սնտոխի հանդերձանքներով ա-
 մուսնացընէ. և զի ժամանակը
 չի ներեր կամ կարողութիւնը չի
 տանիր՝ ակամայ երեսի վրայ թո-
 ղուլ կը սպարտուորի, ուրկէ ինչ
 խելքէ դուրս տարածայնութիւն
 և պէտպէս չարիք կը հետեւին
 նէ, յայտնի է :

Իսկ մէկ զաւակ մը ունեցողը
 այն անկարգ և մնասակար սովս-
 րութիւններուն համար՝ որ ազ-
 դիս մէջ արմատացեալ է՝ շատ
 ստակէ ելլելով ուրիշներէն վար
 չի մնալու համար ինքն ալ անրդ-
 գու շարքար կ'իյնայ աղքատութե
 մէջ, ու թշուառ յուսահատու թ

Թէպէտ կը զըզջայ իւր զաւակը
ամուսնացունելուն, բայց իր կա-
րողութիւն ձեռքը չանցնելէն ետեւ,
ողորմելի կենօք մահուան կը փա-
փաքի՝ որ տառտապանքէն ազատի :

Այնպիսի մարդը՝ չէ թէ մի-
նակ իր անձին կը վնասէ, այլ և
ընկերին. չէ թէ լոկ իր վարկու-
մը (իթիպարը) կը կորսընցընէ,
այլ և բարեկամին ալ մեծ գայ-
թակղու թիւն կուտայ, որ իրեն
հաւատարները կամ թէ արհես-
տակիցները անկէ վար չի մնալու
համար՝ կը ջանան որ անոր նման՝
կամ աւելի աղէկ ըրած ըլլան ի-
րենց հարանիքը, որով կուբարար
իրենք ալ կ'իյնան նոյն թշուա-
ռու թեան խորխորատը և մեծ
նեղութիւն կը քաշեն, միանգա-
մայն կորսընցընելով իրենց պա-
տիւր հասարակութեան անջին :

Ահա ասանկ սնտոյի և վնասա-

կար սովորութեանց գործածու-
թիւնովը աղգիս հասարակութե-
կրած գեշ հետեւանքները ընդ-
հանուր աղգիս հոգեւորական
և մարմնաւորական Եղովնե-
րուն յայտնի ըլլալուն, այս ան-
գամ կրկին և կրկին խորհրդակ-
ցութիւն հասարակաց օգտին հա-
մար Աղգային Եղովնին մէջ խօս-
ուեցաւ, և հարսանեաց բարե-
կարգութեան համար յատկապէս
որոշակի կանոնադրութիւն հաս-
տատուեցաւ, և ամէն մէկուն
ընելիք ծախքերը և հարսանեաց
կերպը՝ ութ աստիճանի կարգաւ
նշանակելով, նորոգ տպագրեցաւ
այս կոնդակը, որպէս զի իւրա-
քանչիւր ոք իր կարողութեանը
համեմատ շարժելով՝ գոնէ առ-
այժմ աղքատութեան գլխաւոր
պատճառներէն մէկը աղգիս վը-
րայէն վերնաց, ու հասարակու-

Թեան բարեկարգ զարգացմանը
յոյսերնիս հաստատ ըլլայ :

Աւստի սիրովն Յիսուսի կը
յորդորեմ ամէնքնիդ ալ, որ այս
նորոգ սահմանեալ կանոնադրու-
թեանցս հակառակ վարմունք չը-
նելով՝ առանց զանցառու թեան
ձեր պարտաւորութիւնը կատա-
րէք հնազանդութեամբ, որով և
ազգային բարեկարգութեց յա-
ռաջադիմութեանը օգնական ըլ-
լալով ազգիս փառքն ու պատի-
ւը ելելընէք :

Աղջ լերուք և օրհնեալք ՂԱ
տուծոյ և յամենայն սրբոց նորա,
և 'ի մէնջ, ամէն :



Ս Ա Հ Մ Ա Ն Բ Ե Ի Կ Ա Ն Ո Ն Բ

Որոնք հրատարակուեցան հարսանեաց
բարեկարգութեանը համար :

Յամին 1848 մայիս 18

Կ Ա Ն Ո Ն Ա .

Ինչպէս որ ազգային սովորա-
թիւն է , նշանտուքը միշտ պիւ-
տի ըլլայ ուրբաթ որ Պատրիար-
քարանի մէջ , և ամուսնացող
անձանց տաներէց քահանաները ,
ու երկու կողմէն մերձաւոր ազ-
գականները պիտի գտնուին :

Կ Ա Ն Ո Ն Բ .

Մինչեւ այսօր ազգիս մէջ նը-
շանտուքի համար որոշուած խոր-
հրդաւոր կանոն մը չի կար , մի-
այն ոսկի դրուէր էր նշան ըլլա-
լու համար , այն ալ իւրաքանչ-
իւրոց իրենց կամացը համեմատ
աւելորդ ծախքերով :

Ուստի ազգային յողովը խորհրդաւոր բան մը ընելու համար, և մանաւանդ հասարակաց օգուտը նայելով տահմանեց թէ նշանը ըլլայ խաչ, և այն խաչը առնուի ազքատաց համար սահմանեալ ազգային գանձանակին յարգի տեսուչներէն, որ ութ աստիճանի կանոնով՝ արժէքին կազմանէ ալ ութը կերպ տարբերութիւն ունի, և նոյն արժէքէն՝ թէ խաչին ծախքը, և թէ նշանտուքի աւուր Վատրիարքարանի յատկացեալ ծախքերը հանելէն ետեւ, որ է գրագրին և այն տեղի սպասաւորներուն և անխորժ ժամկոչներուն պարգեւները, աւելորդը ազքատաց և որք աղջրկանց գանձանակին անպատճառ սխտի տրուի, հաշիւը որոշեալ ցուցակի մը մէջ յայտնի նշանակելով:

Նշանի խաչերուն արժէքին կողմանէ տարբերութիւնը :	ՂԷԶ .
Առաջին աստիճանի վերին անձանց (էլա)	600
Երկրորդինը	400
Առաջին աստիճանի միջակ անձանց (էլա էսնաֆին)	300
Երկրորդինը	200
Առաջին կարգի միջակ անձանց (էվ- սաս էսնաֆին)	150
Երկրորդինը	75
Առաջին կարգի ստորին անձանց (էտ- նա էսնաֆին)	50
Երկրորդինը	25

ԿԱՆՈՆ Գ .

Ինչպէս որ յայտնի է, հար-
սանեաց մէջ կատարուելու գըւ-
խաւոր գործը պսակի խորհուր-
դըն է, և պսակը ընողն ալ տան-
երէց քահանայն կ'ըլլայ, որ իւր
պաշտօնը հոգևորապէս կատարե-
լովը, հարսանեաց տէրերն ալ կը
պարտաւորին իրենց շնորհապար-

տու թիւնը ցուցընելու մտօք ա-
յ որ մէկ նուէրք մը մարմնաւորա-
լէս ընծայել, որն որ ժողովրդա-
տէր քահանային անժխտելի իրա-
ւունքն է, որովհետեւ քահա-
նայք ալ ժողովրդոց կամաւոր
տուրքէն պիտի շահուին, ինչ-
պէս սրբազան Մարտիրոս Բացար-
ձակ կը գրէ, թէ մե՛նք ձեր մէջը
հոգեւորը կը սերմանեմք՝ մե՞ծ
բան մըն է ձեզմէն մարմնաւորը
հնձել՝ այսինքն, ընդունիլ. և յի-
րաւի թէ որ հոգին մարմինէն
մեծ է, քահանայից հոգեւորական
գործերն ալ մեծ համարուելով՝
ստակով չի փոխանակուիր, միայն
թէ սիրով և յօժարութիւնազան
առիթմներու մէջ անոնց վճարելու
է բաւական նուէրք մը՝ որ կարող
ըլլան իրենց պիտոյքը հոգալու :
Ահա այնպիսի առիթմներէն
մէկն ալ հարսանեաց արարողու-

Թիւնն է , որուն համար մինչեւ
հիմայ կանոնաւոր սրտով մը ե-
զած շղթայով , արտառոց սովու-
րու թիւններ մտած էր հարսան-
եաց մէջը , ինչպէս են մամի քի-
թը կտրել , հալաւ վերցընել ,
շաքար բաժնել , կամ թէ ըստ
այլազգաց կինայ դնել կամ խաղ-
ցընել տալ : Այս անպատշաճ
գործերը ըստակ տալու միջոց մը
ըլլալով՝ հարսնիքին տունը մէկ
անօրինակ զբօսարանի մը տեղ կը
նմանէր , ու պսակի խորհրդին
յարգը կ'աւրէր , վասնորոյ այժմ
բոլոր այս անպիտան գործերը ար-
գելուած է , բայց միայն թագա-
ռու թեան ժամանակը քահանայն
օրհնեալ գինի պիտի տայ պսա-
կելոց , որ քրիստոնէական ուղ-
ղափառ Ակեղեցւոյ հին բարե-
պաշտական արարողութիւնն է ,
և այն առանց մէկ ստակ մը տա-

լու կամ առնելու : Իսկ քահա-
նային տրուելու նուէրքին չափը ,
իւրաքանչիւր անձանց տուած
նշանի խաչին աստիճանին նայե-
լով պիտի ըլլայ , և անկէ ՚ի զաս-
ոջ թէ միայն փեօայն՝ այլ ով որ
է նէ՝ բնաւ ստակ մը տալու ա-
ռիթ չունի :

1591

Հարմարութեան աւուր որոշեալ տուրքը որ անպատ- ճառ պիտի վճարուի :	Հարմա- խօսուելի : ՂԵՀ :	Պատշ- դրամ : ՂԵՀ :
Առաջին աստիճանի (էլա)	150	1500
Երկրորդինը	100	800
Ա. աստի (էլա էսնաֆին) .	75	500
Երկրորդինը	50	350
Ա. կարգի (էվսատ էսնաֆ)	40	200
Երկրորդինը	30	100
Ա. կարգի (էանա էսնաֆին)	20	50
Երկրորդինը	10	25

Ահա այս որոշեալ տուրքերը
կամ փեօացուն կամ անոր կող-
մէն մէկը պիտի վճարէ անպատ-
ճառ իր ասնեքեցին , հրամանա-

գիր առնուած օրը . նոյնպէս
հարսնացու աղջկան ծնողքը կամ
անոնց կողմէն մէկը պիտի վճա-
րեն նոյն օրը աղջկան տաներէ-
ցին , այս որոշեալ տուրքերը ,
ինչ աստիճանի արժանաւոր են
նէ . որովհետեւ երկու կողմի
տաներէցները զատ զատ պաշտօն
ունին , զատ զատ պիտի ընդու-
նին իրենց ժողովուրդին նուէր-
քը կանանեալ կերպով . իսկ տը-
նանկ աղքատաց հարսնիքները
ձրի պիտի կատարուին ըստ ամե-
նայնի :

Այլ թէ ոմանք անհոգ մար-
դիկ՝ ինչպէս որ լսած եմք , չըսեն
թէ այսօր կամ վաղը պատրաս-
տութիւն չունիմք վճարելու մեր
պարտքը՝ օր աւուր երկարաձգե-
լու մտօք , այնպիսեաց համար
ալ կը յորդորեմք՝ որովհետեւ ու-
րիշ աւելորդ ծախքեր ընելու

չեն, հարկաւ քահանային տալու
որոշեալ տուրքը փութով հա-
տուցանեն Պատրիարքարանի մէջ,
որ օր հրամանագիրը կ'ընդունին:

Կ Ա Ն Ո Ն Դ .

Հին սովորութիւններէն մէ-
կըն է փեսայացուին ընծայն, որ
(ըռզակ անունով) կուտայ հար-
սին. նմանապէս հարսնացուն իր
բերած օժիտէն (ճէհէզէն) զատ՝
քանի մը կտոր հագուստի ծրար-
ներ (սօխճալըխ անունով) կամ
ուրիշ ոսկեղէն կամ արծաթեղէն
բաներ կը պատրաստէր ընծայել
փեսին, կամ անոր հօրը, կնքա-
հօրը և այլ մերձաւոր ազգական-
ներուն: Ա՛րդ՝ այս կերպ առու-
տուրէն՝ բուն առջի անգամին,
ինչ սոսկալի ատելութիւններ,
կռիւներ, ու տարածայնութի-
ւներ պատահած կան նէ, ամէ-

8411

նուն յայտնի է , գեո ընտանե-
կան սերը չի հաստատուած ան-
հաշտ թշնամութեամբ իրար ա-
տելու գիպուածները , հազար
ու մէկ անգամ տեսնուեր ու լըս-
ուեր է , ահա այս տնաւեր ըն-
ծայատուութեան գործը բոլորու-
մին արգիլեալ է , և յողովը ու-
րոշեց թէ փեսին տալիք ընծայն ,
թէ հարսին բերելիք օժիտը՝ այն
կերպով ընելու որ բնաւ մէկը չի
համարձակի կանոնած սահմանէն
գուրս բան մը ընել , կամ երկու-
կողմանց իրարու (սաչը անունով)
ընծայներ տալ , թէ հարսնիքէն
առաջ , և թէ վերջը : Իսկ փե-
սին տալիք ընդակը անպատճառ
պոսիման ժամանակը պիտի տըր-
ուի , չէ թէ հարսսո գնալու ա-
տեննին :

Ընդակներուն արժէքը :	Ղուռուշ.	
Ա. աստիճանի . (էլա)	15000	էն 20000
Երկրորդինը	12000	էն 15000
Ա. աստի . (էլա էսնաֆին)	8000	էն 10000
Երկրորդինը	4000	էն 5000
Ա. կարգի (էվսաա էսնաֆ)		2500
Երկրորդինը		1000
Ա. կարգի (էանա էսնաֆ)		500
Երկրորդինը		150

Հարսնացուներուն ճէհէզին արժէքը :	Ճէհէզի արժէք .	Թեւեւեւեւ Էաբուի .
	Ղուռուշ.	Տրմ.
Ա. աստի . (էլա)	15000 էն 20000	խա 100
Երկրորդինը .	12000 էն 15000	" 80
Ա. (էլա էսնաֆին)	8000 էն 10000	" 70
Երկրորդինը .	4000 էն 5000	" 60
Ա. (էվսաա էսնաֆ)	2500	" 50
Երկրորդինը .	1000	" 40
Ա. (էանա էսնաֆ)	500	խմ. 50
Երկրորդինը .	150	" 40

Այս ապա կանոններէն դուրս
բնաւ մէկ ստակի մը բնծայ կամ
այլ ինչ երկու կողմէն ալ պիտի
չի արուի :

Ազգակործան չար սովորութի
 մըն ալ կայ՝ Դրսիսմա անուսով
 ստակը՝ որ մեր մէջը օտար սղգե-
 րէն դեռ նոր մտած է . աս բա-
 նին համար խտուիւ կը պատուի-
 րեմք՝ որ բնաւ երբէք ստակ մը
 չի պիտի տրուի աղջկան կողմա-
 նէ փեսայ եղողին , վասն զի թէ
 որ փեսացուն անով պիտի շահ-
 ուի , ու ինքը մինչեւ այն ժամա-
 նակը վաստրկող մէկը չէ՛նէ՝ ան-
 կէ ետեւ ալ չարագոյն թշուա-
 ռութեանց մէջ իյնալիքը յայտնի
 է , ուստի առաջուց մտածելը
 խելացութիւն է՝ թէ այն ստա-
 կը հատնի նէ՝ ի՛նչ պիտի ընէ .
 ուրեմն ազգին աղքատ տուն մը
 եփեցրնելովը՝ ինքը շահ մը չընե-
 լէն զատ՝ մեծ մնաս ըրած կը սեպ-
 ուի : Ի՛այց թէ որ վաստրկվոր
 է , ու աղջրկան քիչ կամ շատ բա-
 տակին կարօտ չէ , ու կ'ուզէ որ

այն կերպով ստակը ձեռքը ան-
ցընէ, այնպիսին ալ ագահու-
թեան ոգի ունենալովը, ամուս-
նական սիրոյ կապը իր ագահու-
թեանը միջոց մը բռնած է, ուս-
տի այսպիսի անվայելուչ ճամբայ
բռնող մարդիկ՝ աւելի թշուառ
եղեր են իրենց կենցաղավարու-
թեանը մէջ՝ քան թէ երջանիկ .
վասն զի ամուսնացելոյ խաղա-
ղութիւնը դրամով չի հաստատու-
ուիր, այլ ճշմարիտ սուրբ սիրով՝
որն որ Քրիստոս օրինակ կուտայ իր
եկեղեցւոյն, և սրբազան առա-
քեալը կը յորդորէ մարդիկնե-
րուն, որ իրենց կնիկները սիրոյն
խնամօք պատուեն, և կնիկներուն
կը պատուիրէ՝ որ իրենց տիրոջը
հնազանդ կենան ամէն կերպիւ :

Ահա այս է ամուսնացելոյ ա-
ռաջին և հարկաւոր պարտքը .
ուրեմն վայ է անոնց՝ որ այս պար-

տաւորութիւնն չի ճանչնալով,
իրենց զաւակը թշուառութեան
խորխորատը ձեռքովն ին կը ձգեն,
զանոնք ստակով ամուսնացուցա-
նելով: Աւստի ինչպէս որ սբ Լ-
կեղեցւոյն օրինաց դէմ է այս սի-
րոյ կապը քակուելու պատճառը,
անանկ ալ համօրէն ազգիս անըն-
դունելի է այս չար սովորութիւր,
որ ստակով հաստատել կ'ուզեն
իրենց սուրբ պսակի խորհուրդը:

Ասոր համար կը պարտաւորեմք
մեր ազգայինները, որ ոչ աղջկան
կողմէն ստակ տրուի, և ոչ փե-
սին կողմէն ստակով աղջիկ փրն-
տրուուի. անկէ 'ի զատ՝ որ հայ-
րենական ժառանգութիւն ունի
աղջիկը, այն ալ շատ ազէկ կ'ըլ-
լար անանկ կարգի մը դնել՝ որ ի-
րենց հաստատուն եկամուտ մը
ճարելով՝ ձեռքերնին եղածը չի
կորսընցընէին:

ԿԱՆՈՆ Ե .

Արովհետեւ հինուց սովորու
թիւն է՝ որ հարսին քօղքը փե-
սայն կը խնդէ , ուստի կը պարտա-
ւորին որ այս կանոնագրութեան
ցուցակին համեմատ մինակ քօղ-
քը առնեն և տան , որուն թէ
վայելչութեանը և թէ արժէքին
կողմանէ տեսակները որոշելով
ստորագրած է , իսկ հարսնացու-
ին պէտք եղած (չէտիկ , բա-
բուճ , կամ քօղին) ոտքի ագա-
նելիքները աղջկան կողմէն պիտի
ըլլայ , բնաւ վրան ոսկիէ՝ արծը-
թէ՝ կամ ինչ և իցէ կերպով զարգ-
մը չի պիտի գտնուի :

Իսկ հարսնիքի մոմերը տալը՝
որ կնքահարին սովորութիւն է , ա-
նոր համար ալ քօղքին արժէքին
համեմատ՝ որոշ արժէքներով կը-
շառքին չափը հոս նշանակուած

է, որ նոյն չափով անպատճառ
 Մայր) Եկեղեցւոյ ծախարանէն պի-
 տի առնուի, բայց անոնց վրայ
 քօրպէլա և ուրիշ զանազան զարդեր
 կամ սուտ ծաղիկներ, բնաւ չըլ-
 լայ պիտի. ու հարսնիքէն ետեւ՝
 նոյն աւելորդ մոմերը իւր կողմի
 Եկեղեցւոյն ընծայ ընելու է :

Քօղբերուն որոշեալ տեսակները և հարսնիքի մոմերուն կշառքը :	Քօղով որժեհ. Ղշշ.	Մոմի իշտոտ Քաշ
Ա. աստիճանի (էլա) Ֆիստուկայ	400	8
Երկրորդինը . . . " "	300	7
Ա. (էլա էսնաֆին) Ճանֆէս	250	6
Երկրորդինը . . . " "	200	4
Ա. (էվսատ էսնաֆին) Կիւր	150	3
Երկրորդինը . . . " "	100	2
Ա. (էսնա էսնաֆին) Կոֆի	50	1 1/2
Երկրորդինը . . . Իկիւրէլ շալ	30	1

ԿԱՆՈՆ Զ.

Հարսանեաց օրը անխտիր ո՛
 և իցէ ծանօթները կամ բարե-

կամները հարսնիք հրաւիրել պիտի չըլլայ՝ թէ ազգային ըլլայ՝ թէ օտարազգի . այլ փեսայն , իւր ծընողքը , եղբայրները , քոյրերը , և կնքահայրն ու կնքամայրը , ու մինակ տաներէց քահանայն պիտի հրաւիրէ , բայց իրիցկին երթալու սովորու թիւնը վերցաւ :

Աիրակի կէս օրին՝ որ հարսառ պիտի երթան՝ յիշեալ անձինքներէն զատ՝ մէկ մարդ մը չի պիտի երթայ բնաւին , անանկ որ արք և կանայք վեց կամ ութ հոգի պիտի ըլլան , և հարսին տրուելու ըռզակը հետ չի պիտի տանին :

Հարսնացուն փեսին տունը բերուելուն պէս անմիջապէս հալաւն օրհնուի , և եթէ հարկաւորի փեսայացունին կամ ծնողացը խնդրանօքը աւելի քահանայ կանչել , նայն կողմի Ակեղե

ցիէն մէկ կամ երկու քահանայ
հրաւիրեն, որ ձայնակից ըլլան
տաներէցին, և յետ հալաւին
օրհնութեանը առանց սեղանի
պատրաստութեան, միայն շաքա-
րեղէն մը և քաղցր ըմպելի մը
տրուի, ու այնուհետեւ տու-
ներնին դառնան, և թէ տանե-
րէցը հեռու տեղէ է, կանոնադ-
րութեան արգելք չըլլալու հա-
մար՝ ազատ է ուրիշ տուն մը եր-
թալու՝ թէ ժողովրդոց՝ թէ ազ-
գակցաց և թէ բարեկամաց :

ԿԱՆՈՆ Է .

Հարսնացուին տունն ալ չի
պիտի հրաւիրեն դրսէն մարդ՝
թէ աղգային թէ օտարազգի,
մանաւանդ հարսանեաց բաղնի-
քին կանայք բազմութեամբ եր-
թալով կերակուր և ըմպելիք տա-
ներու չեն բնաւ, աւելորդ ու

անվայելուչ զարդերով իրենք ի
 րենց (միւրկէթը տեսնանք ըսե-
 լով) հանդէսներ ջրնեն, այլ ա-
 մէն տեղ պարկեշտութեամբ ըլ-
 լայ շարժմունքնին: Հարսնացու-
 ին տունը միայն ճնողքը՝ եղբայր-
 ները՝ քոյրերը՝ պիտի գտնուին
 շաբաթ օրուրնէ: Փեսայացուին
 կողմէն հարսառ գալը՝ որ կիրա-
 կի կէս օրին պիտի ըլլայ, թէ որ
 հարկ ըլլայ նէ՝ մօտաւոր ազգա-
 կաններէն կամ գրացիներէն հը-
 բաւ իրուին՝ որ հարսնացուին նը-
 շանին օրհնութեան ժամանակը
 ներկայ ըլլան, և յետ օրհնու-
 թեան զանոնք մէկ մէկ շաքարե-
 ղէնով և քաղցր ըմպելիով պատ-
 ուելը ներեալ է, բայց հարսը
 տանելէն ետեւ եկող հարսնե-
 ւորները բսլորն ալ բարեմաղթե-
 լով անմիջապէս իրենց տունը
 դառնան, հարսին երթալու տե-

զը մօտ ըլլայ նէ , քօղքով տանե-
լը ներեւի կ'ըլլայ , եթէ հեռու՝
հարկաւ պիտի ծածկուին քաղա-
քիս սովորութեանը պէս , ու
հարսին տնէն մէկը չի պիտի եր-
թայ փեսային տունը՝ բաց ՚ի
հարսնքուրէն :

Կ Ա Ն Ո Ն Ը .

Պատկի խորհուրդին կատա-
րումը պիտի ըլլայ երկու շաբթի
առտուն կանուխ , որ ատեն տան-
երէց քահանայն ՚ի միտսին առ-
նելով՝ ուրիշ մէկ կամ երկու քա-
հանայ ալ՝ թէ որ ուզվի , կամ
թէ ըսեմք նոյն կողմի՝ կեղեցւոյն
քարոզիչ վարդապետը՝ կամ Պատ-
րիարքարանի կողմէն հրաւիրեալ
վարդապետ մը , և այլն , գան
հարսանեաց տունը՝ և նք պտակի
խորհուրդը կատարեն . այս միջո-
ցին հարկաւորի նէ հարսանեաց

տէրը կրնայ հրաւիրել իւր ազգականներէն կամ դրացիներէն քանի մի հոգի ալ՝ և յետ կատարման խորհրդոյն՝ անմիջապէս պսակը վար առնելու կամ թագառութեան գործն ալ պիտի կատարուի . ետեւ հրաւիրեալ անձանց, նաեւ կիրակի օրէ գլուխուող ազգականաց ամէնուն առհասարակ շաքարեղէն և ըմպելի մը տրուելով անյապաղ պարտաւոր են ետ դառնալ իրենց տունը կամ իրենց գործին . բայց հետեւեալ երեքշաբթի օրին իրիկունը, հարսնիքին տունը բնաւ մարդ մը չի պիտի գտնուի՝ թէ հարսին և թէ փեսին կողմէն՝ եթէ բարեկամ և եթէ ազգական, որովհետեւ արգելեալ է :

ԿԱՆՈՆ Թ .

Հարսանեաց տները բնաւ

դրսէն սպասաւորներ չի պիտի
գանուին . ոչ խոհարար (աշծի)
ոչ սուրճ եփող (խահվէծի) որ
չատ հեղ սափրիչները կ'ըլլան .
ոչ մատակարար (քիւէրծի կամ
վէքիլխարճ) և ոչ փեսացուն տա-
նը մէջ պիտի գերծուի . այլ ինչ
պէս ամէն անգամ , այնպէս ալ
հարսանեաց օրը կրնայ սափրիչին
խանութք երթալ ու հոն գերծ-
ուիլ :

Բողոքովին արգելեալ է դըօ
սանքի համար նուագածուներ
(չալղըծի կամ սաղէնտէ) բերել
կամ ուրիշ խաղ հնարող մարդիկ-
ներ (օյինճիներ) և այլն :

Կերակուրի կողմանէ հարսա-
նեաց տանը սովորական կերպը սկա-
հելու է , բայց հարսնիքի անուամբ
անուշեղէն կամ այլ տեսակ ա-
ւելորդ ու տելիքներ բնաւ չըլլա-
լէն զատ , ոչ փեսին կողմանէ

հարսին տունը , և ոչ հարսին
կողմանէ փեսին տունը , ուսե-
լիք կամ ըմպելիք չի պիտի խոր-
կուի . նմանապէս հարսանին ժա-
մանակ փեսին կողմէն պարգեւ-
ներ չի պիտի տրուի հարսին տու-
նը , և ոչ յետ հարսանեաց փեսին
տունը հարսին կողմանէն եկող-
ները պարգեւ տալու են՝ որովհե-
տեւ ազգովին արգիլեալ է :

Կ Ա Ն Ո Ն Ժ .

Հարսնատեսութեան գնալու
օրերնին՝ (որ է եէտի) և ձեռք
պագի օրը բնաւ երբէք կերակու-
րի պատրաստութիւն չի պիտի
ըլլայ , այլ միայն շաքարեղէն մը ,
ըմպելի մը , և խահլէ մը ըլլա-
լու է , ու նաեւ հարսանեաց
համար բաղնեպաններուն աւելի
տուակ պահանջելը լսած ըլլալով՝
կը ծանուցանեմք՝ թէ ուր որ պա-

տահի այնպիսի ծանր պահանջ-
մունք , Պատրիարքարանս իմաց
տրուի , որ այն ծանրութիւն ինչ
և իցէ կերպով արգիլելու ճարը
հոգացուի :

Կ Ա Ն Ո Ն Ժ Ա .

Հարսանեաց տանը մէջ ստակ
ցրուելու անվայել սովորութիւ-
նը բնաւ մէկ անգամ մը չի պի-
տի ըլլայ , նմանապէս և հարսին
գրպանը (ճէպը) ստակ ձգելու
անպատշաճ սովորութիւնն ալ
բոլորովին արգելուած է , ու նա-
եւ երեսուսէ ըսուած պարգեւ-
ները , բնաւ մէկ կողմէն չի տըր-
ուին , ոչ փեսայն , ոչ անոր ծնող-
քը՝ և ոչ կնքահայրը կամ կնքա-
մայրը , և ոչ սողականները , կամ
ղրտէն բարեկամները տալու պար-
տաւորութիւն չունին . նոյնպէս
ալ փեսին՝ թէ հարսառի օրը և

Թէ ձեռքս պիտի օրը հարսին կողմանէ , մասնի կամ այլ ինչ ընծայ բնաւ չի պիտի տան , և ոչ փեսայն պիտի ընդունի :

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ազգային զեղխութիւններուն պատճառ եղող անպատեհ սովորութիւնները արգիլելու համար, այս օգտակար կանոններուն լաւագոյն բարեկարգութիւններ յառաջ բերելիքը շուտով կը ճանչնան խելահաս եղողները , ու ստիամէն զգաստ և խոհեմ մարդիկ պիտի զգուշանան որ այս կանոնագրութեանցս հակառակ շարժելու մեկուն չի թողուն , որ բարի սովորութիւններ արմատանալով հասարակաց մէջ , օր աւուր աղքատութեան առաջն առնուելու ճարր նայուի , և ազգը խաղաղութեամբ ու անօրբութեամբ

աւելի պայծառանալու և առա-
քինութեամբ զարգանալու ար-
ժանաւորի յաջողութիւն Տեառն,
և ազգասիրական խնամօք և
պաշտպանութեամբ հողեւորա-
կան և ազգային յողովոց, որոց
նպատակն է մի միայն ազգայնոց
հանգստութիւնը ու փառքը :

